ԲԱԶՄԱՎԷՊ

Զ· ՏԱՐԻ· ԹԻՒ 12· **1848** ՅՈՒՆԻՍԻ 15·

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅԵՏԻՆ ԽՕՍՔ

ԱՌ ԱՒԱՐՏԱՎԱՐԺ ՀԱՄԲԱԿՍ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՅՈՒՂԱՐԿԵԼՈՎ ԶՆՈՍԱ Ի ՀԱՅՐԵՆԻՍ

Բ·

ԱՐԴ ահաւասիկ արձակեալք դուք 'ի վարժարանէս, մանկունք հրահանգեալք, վերադարձեալք 'ի նաւ, դարձաւորք 'ի հայրենիս: Սրանան հեռանան Թագչին սահմանք զեօթն ամ՝ ծրագրեալք զձեօք. փայտ անհիմն և անյարկ տատանեալ 'ի լուծական դաշտին բարձեալ կրէ զձեզ, և ծուխ յափշտակեալ տանի ընդ ոլորտս ոչք մերձենան և հեռանան: Ահաւադիկ մտէք 'ի նոր վիճակ, 'ի նոր կեանս. արդ ասացէք ինձ, սիրելիք, զինչ է զոր յառաջ քան զամենայն գտէք նովաւ. զծովդ շրջասփիւռ, զերկինս համապարփակ, զծովս ընդարձակագոյնս. այդոքիկ ոչ զեռամբ ածեալք և ոչ ըղձիւք ըղձացեալք: Չիք ինչ տակաւին նոր արտաքոյ, սակայն է իմն զոր գտէք. ամփոփեսջիք 'ի ձեզ ինքեանս և գտջիք նոր զոմն 'ի ձեզ: Այո՛, առաջին որում հանդիպեսջիք մեկնեալք աստի՝ լիջիք դուք ինքնին, անձն իւրաքանչիւր. արձակեալք 'ի հոգածու ձեռաց և յազդողական ձայնից նոցա՝ ազատութիւն իմն և համարձակութիւն հանգոյն անծայրածաւալ հորիզոնից՝ կարծիցէք 'ի ձեռս բերել, օդ իմն ներքին լցուսցէ ամբարձցէ զկուրծս ձեր: Գիտակցութիւն ևեթ լիցի ձեզ և քննիչ և դատաւոր. 'ի սակաւ աւուրս ծանիջիք փոքր 'ի շատէ զձեզ և զչափ զօրութեան ձերոյ. և որպէս ձագք նորափետուրք զառաջին թռիչսն փորձե-

լով՝ հիացեալ կայջիք։ Որք որ 'ի ձեզ ցարդ կառավարեցայք և օտարին ձեռամբ, այժմ միայնակ 'ի ձեզ ապաստան արասցեն զերասանակսն։ Ո՛ն, սկիզբն արարէք յանժամ յիշելոյ զօրէնս բարոյականս, թէ որպէս արժան իցէ մարդոյ վարել առանձինն, և զիւր կեանս տնտեսել. զորս 'ի կամաց ստանձել, ո՛րչափ թուլացուցանել. և դարձեալ որպէս կենցաղավարել ընդ ընկերս։ Քանզի ընդ ձեզ գտջիք և զառաջին ժողով ընկերութեան, 'ի նոյն ինքն 'ի խումբ ձեր, որոց ընդարձակեալ կապ եղբայրութեան լուծմամբք յաշակերտակցութենէ՝ զընկերութեան առցէ կերպարանս. այլ և նոր դէմք և նոր վարք նաւազինդ և ուղեկցաց՝ լիցին ձեզ նախափորձ իմն աշխարհի յոր մըտանիցէք ընդ հուպ։

Աշխա՛րհ. անուն և իրք զարմանալի. յորմէ հեռաւորնակք իբրև զափամբք քերէիք ցայսօր, այսուհետև 'ի խորս խաղայցէք. թա՛տր ընդհանրական, յորում ամենայն մարդ հանդիսանայ, ուր ամենայն ձայնք լսին, ուր ամենայն կիրք նշաւակին, ուր ամենայն ոք և տեսանէ և տեսանի։ Քանի՜ տարօրինակք և խառն 'ի խուռն առաջի լինիցին ձեզ և բարք և խօսք. և ո՛րքան նորանոր խորհուրդք և ցնորք և իղձք և կարծիք 'ի սիրտս ձեր. և ո՛րպէս 'ի սուղ ժամանակի բազումք յայդցանէ մեծապէս աճումն առնուցուն։ Ոի՞ գործիցէք, ո՛րպէս վարիցիք յանժամ։ Եկայք աղէ, և մինչդեռ կայ տակաւին ժամանակ 'ի ձեռս ձեր, յորժամ պարապ տան ձեզ երկարութիւնք տուընջեան 'ի սաղապաճեմ ծովագնացութեանդ, և յորժամ ընդ հանդարտել բնութեան յերեկորին պահու՝ հանդարտեսցի և ձերդ բնութիւն, և քաջանկատ գործիցին և աչք և միտք, և լըջութիւն իմն ոչ անխառն յանուշակ մելամաղձոյ տարածեսցի զձեօք, յամբառնալ անդ գիշերավար սողոխին, և 'ի յամբաքայլ յառաջել լուսաւորաց երկնից յիւրաքանչիւր խորանս, 'ի պշնուլ ձեր յերկար ընդ արեգականդ գունտ ծովասոյզ, և ընդ երկայնակօս ձիւնադէզ մրփուրսն շարամանեալս փոսփորեան և եսպերեան լուսովք. յայնպիսումն պահու առջիք խորհել 'ի վերայ հանդերձեալ կենաց ձերոց. օրինակ իմն, որպէս վաճառական յառաջատես մինչև հասեալ 'ի նաւահանգիստ՝ զիւրոց վաճառուց տնտեսելով և բաժանելով զշահս և զհնարս շահուցն համարելով. կամ որպէս մայր նախահոգակ որ 'ի խաղաղացուցանել անդ զքաղցր թմբրութիւն մանկանն՝ յեցուցեալ և զիւր գլուխ 'ի սնարս հոմաշարժ և քաղցրաճռինչ օրօրանին՝ խորհի զապագայ կեանս և զվիճակ սիրասնունդ զաւակին, և երազէ նմա բաղդս կամ պայմանս, կամ ոչ գտեալ ելի աղագս 'ի հնարս խորհրդոյն՝ փոքր մի տրտմի և փոքր մի անդէն արգահատի. այսպէս և ձեր ճակատ եղեալ 'ի կողս լայնորորան նաւափայտից՝ խոկասջիք զվերստին մուտ ձեր յաշխարհ. դիջիք յանդիման իւրաքանչիւր զվաճառս արդեանց զոր աստի բարձէք, և իւրաքանչիւր զբարս բնութեան իւրոյ, և զանհուն կերպարանս, զճանապարհս և զարկածս աշխարհի՝ որչափ ինչ կարէք ճանաչել զայն մինչև քաջ տեսեալ։ Ա՜հ, ծով մեծ է աշխարհ, սիրելիք, և ամենայն հողմոց արձակարան. ուր և նաւք մեծամեծք վտանգին, ուր բազում անգամ և իմաստունք զգլխեալ յորձանապտոյտ լինին. ուր տեսաք և զառաքինիս՝ ղեկակործս դանդաչեալս. իսկ դուք նաւակք զաղփաղփունս զի՞նչ լինիցիք. — ոչ ինչ հասցէ ձեզ վտանգ, եթէ զաչալրջութիւն, զիմաստութիւն և զերկիւղն Աստուծոյ անմեկին ունիցիք։

Այլ արդ թափեսցուք 'ի ձէնջ զլըրջական մտայածութիւնս, յորոց կարծեմ ոչ առանց օգտի սթափիք, և թողցուք զձեզ հետազօտել անձկաւ զհայրենական ափունս։ Արդ թուիմ և ես բացուստ 'ի բաց նշմարել զձեզ ընդ Դարդանեան կիրճն անցանելով, ընդ հիւս աչաց յեղյեղել զյիշատակս Փեստեայ և զԱբիւտոնի, զելլենական քաջանութիւնն և զՔսերքսեայ գոռո-

զութիւնս, և ոտնձել քաղցրանալով զանցս պատմութեան. կարծեմ թէ և թարգմանչացն մերոց երթն 'ի Մուզանդիոն խառնեին 'ի խօսս ձեր, և ընդ բաղդ նոցա և ընդ ձեր զուգակշիռս ինչ գործիցէք: Մինչ այս մինչ այն ընդ Պրոպոնտեան և ընդ Վոսփորոնի մըխեալ գեղածիծաղ մկանունս՝ սահագնաց յառաջէք. սիրտ 'ի վեր ընթանայ 'ի ձեզ 'ի տեսիլ կղզեկայն Յունաց, և խփեալ ընթերցասիրաց 'ի ձէնջ զմատենիկս քերդուածոց՝ ամենեքին կարօտանօք հայիք ընդ փախստական Կիւկլադայս՝ որք նորս առաջի ածեն ձեզ ետ զետէ, և արձակին ծայրք դալարազուարճք հայրենական հողոյն: Վըրակք բոլորակք զգեցեալք զամենայն պայծառութիւն գեղեցիկ ամենայնս՝ խտղտեն զաչս ձեր. հոտ ինչ նուրբ և անոյշ զմայլեցոյց զձեզ, և հառաչեցէք ընդ ծաղկաձեմ դաշտակս ամարանոցաց մանկութեան ձերոյ: Եւ ահա տեսանեմ զձեզ յախորժակ իմն ջերմնասնդրուռ՝ 'ի պաղպաջունս նաւուն վերամբարձեալ յոտն 'ի մասն ուս 'ի յուս յեռեալ, չեշտակի բբօք պշնուլ և արտաքս կոչել յոլորտիցն զՄուզանդիոն. արդէն ոմանք 'ի ձէնջ սրակն Լինկեւսք արգոնաւիդ՝ նշմարեցին 'ի կուրծս հորիզոնին զոգ իմն սևորակ արտաքսագոյն, որ տակաւ պարզեալ և կերպացեալ՝ ճշմարտեաց զբարբառ գուշմանդ, Հա՛ Ստամպօլ, հասաք հասաք. և 'ի նոյն բարբառ կայթս հարեալ առ հասարակ կարծեցէք տեսանել զոր տակաւին ոչն տեսանէիք. մինչև օժանդակեալ ձեզ երագասահ նաւուդ յանդիման կացոյց զզարմանալի քաղաքն 'ի բնութենէ և յարուեստէ, զշաղկապ կրկին ծովուց և ցամաքաց, և կրկին քաղաքավարութեանց: Ոսկեսարն արքունական տարածեալ զոստ իւր 'ի կոնք Վոսփորոնի. անսաղարթ նաւակոյտն մայրևոր անկաւ վարագոյր դիմաց քաղաքին. կապարապատ գմբէթքն վառեալ յարեգական ճաճանչից շող հարին յաչս ձեր. լուսինք սրածայրք 'ի գլխոց աշտարակաց մզկթաց 'ի վեր ամբարձան, և երկայնադէզ մռայլ նոճիք նկարեցին ձեզ զկեանս և զմահ բնութեան. զեռալ սկսաւ սրակտուց նաւակնեայն որպէս ջոլիր ձկանց 'ի խառն մեծամեծ կիտից՝ 'ի միջոցս անդ լայնագոգ նաւուց. կարմիր գդակունքն երևեցան: Բայց յանկարծոյն այս ամենայն լուծաւ կքաւ յաչաց ձերոց ընդ յետնոյ ծխայնին շնչոյ նաւուդ. և միայն անքթիթ ակնկառոյց կայք 'ի մարդիկն որ 'ի նաւահանգստին և որ 'ի նաւակսն. որոնեալ խնդրէք զցանկալի ծանօթս ձեր. և ահա նշմարեցին ոմանք, արտասուք ծնան յաչս, և ձեռք առաքեցին զնախկին ողջոյնս. և ահա յապուրակի հոլովեալք 'ի նաւէդ յակասս թափիք, 'ի ցամաք վազէք, ոտս տրոփէք, հերձանէք զամբոխն, դիմէք առ գիրկս դիմեալս առ ձեզ, և կամիք յիրար խառնելով...

Այլ ո՛ն անդր, 'ի զատ կացէք, և մինչև փարեալ գրկապինդ՝ տեսէք միանգամ զո՞յս ոմանս գտանէք անդ: Ահաւադիկ հարք ձեր սիրելիք. տեսէք քաջ, նոյնք իսկ են. այլ եօթնամեայ ժամանակի ներգործեալ 'ի նոսա և ծանրացուցեալ է զգլուխս. շուք ծերութե անկեալ է 'ի հայրենի ալիս. որպէս 'ի ձայն աւետեաց ծննդեան ձերոյ՝ գան և այսօր ընդունել զնորածին կեանս իւրեանց, գտանել զսիրելի սերունդ իւրեանց. այլ ո՞րպէս: Պան խնդրել որդիս առաքինիս, օգնականս ծերագլուխս, անձինս կրթեալս. աղէ տուք խոստումն աներկբայ՝ կատարելոյ զկիղձս նոցա, ապա թէ փարեցարուք, և ընկալարուք զցօղ աչաց նոցա 'ի ճակատս ձեր. ո՛հ, օրհնութիւն երկնից խառնեալ է 'ի կայլակսն յայնոսիկ:

Ո՞ գտանէք և առընթեր հարցդ: Ահաւադիկ հարազատքն ձեր ժիրք և եռանդունք՝ որք յարձակին 'ի լանջս ձեր. ահաւասիկ և ծանօթքն ձեր և կարևոր բարեկամք. եկեալ են և նոքա խնդրել 'ի ձեզ եղբարս քաջուսմունս և քաջակիրթս քան զինքեանս. բարեկամք՝ քաղցրութիւն ընկերութեանց, պարծանս տան և ազգի: Այլ տուք և

դոյա ձեռն չհանելոյ 'ի դերև զակնկալութիւն նոցա։

Օ՜ գտանէք և մեկուսի ընդ որմովքն դադարեալ անժուժաբար, աղաղեալ 'ի սեաւ և 'ի սպիտակ։ Ահաւասիկ մարք ձեր բարեպաշտիկք, ո՛ որբացեալք 'ի հօրէ պատանեակք կիսասուգք. տեսէք քանի ծնելական աղեխարշութեամբ սրտատրոփք եղեալ եկեալ են ընդ առաջ աղեացդ իւրեանց. հայեցարուք 'ի դէմն քաղցուենիս և կողկողեալս, և անդէն իմանայք զինչ ակն ունին նոքա 'ի ձէնջ. հապա իմացին և նոքա անդէն՝ զի յայսմ հետէ արդիւնք և վարձք քրտանց ձերոց լինելոց են փոխարէնք կենացն զոր ետուն նոքա ձեզ վտանգաւ անձանց իւրեանց. գանձարան ձեր լինիցի գոգ մայրենի, և մի՛ հանդանակք վայրապար ծախուց և հեշտի զբօսանաց։

Օ՜ գտանէք և յամբոխս բազմութեանդ, յոր միւք և յածիք։ Նոքա են ահաւադիկ յոքնագէմ դերասանք համեթատեր աշխարհիս այսորիկ, ընդ որս հարկ է ձեզ 'ի մեծոյ կամ 'ի հեռուստ հանդիսակից լինել։ Ահա աստանօր պիտին ձեզ օձանքն զոր երբեմն 'ի կողս նաւուդ մենացեալ անձանց պարմայէիք. աստանօր բանին ձեզ ասպարէզք նահատակութեան, և բացցին օր ըստ օրէ որչափ մտանէք յընկերութիւնս և շրջիք յաշխարհի. արդ մտէք, չիք փախուստ և թաքուստ, արդ նահատակեցարուք, արդ քաջայարուք, արդ իմաստութեամբ կենցաղակից լերուք մարդկան. առ ոմանս մերձենալով, յոմանց հրաժարելով, ոմանց օրինակ տալով՝ յայլոց ընդունելով, յոմանց վարժելով և զոմանս իրատելով, և ամենազան ընդ ամենեսին վարելով, ամենեցուն զպարտուպատշաճն հատուցանելով. ումեմն զպատիւ, այլում զխոնարհութիւն, այլում ունկնդրութիւն, միւսոյն զերախտիս, այլ ումեմն զօգնականութիւն։ Եւ տակաւ ըստ պահանջելոյ հասակիդ և պաշտամանցդ՝ լինել ընտիր քաղաքացիս, ընկերս աննախանձս, գործակիցս արթուն, արբանեակ հլու և հաւատարիմ, գոլիր աչալուրջ, վաճառական անխարդախ, կրպակաւոր անարծաթասէր, վարժապետ յառաջացուցիչ և ազգակիրթ, տեսուչ անաչառ, կաճառակից անհակառակ, գահաղլուխ ըղձամիտ, բանագիր զգոյշ, դատաւոր արդար, բարեկամ մտերիմ՝ 'ի բարիս, տէր քաղցր և գթասէր, ընտանի հաւատար, տանուտէր տնարար, և մատաղատնկոցն զիւրեաւ վերընձիւղելոց օրինակ բարի 'ի զգօնութեան և յաստուածպաշտութեան։

Ահաւասիկ, սիրելիք, գիւտք ձեր 'ի հայրենիս՝ յոր դառնայք։ Այց ես տեսանեմ զձեզ մեծաւ անձկութեամբ վառեալս 'ի գիւտ և այլոց իմիք, և յօժարական առ նա յաւէտ ըղերձել զայսքան ամաց ջանս ձեր։ Հայեցարուք և անդէն գտանիցէք. ահաւադիկ նա մերձ կայ ձեզ 'ի հեռուստ անտի. ահա նա գեղեցիկ և տխեղծ, փառաւոր անփառունակ, վիրաւոր առոյգ, սովամահ կենդանի, կարօտ և բաւական։ Պատառեսցուք զքօղն. ահաւասիկ ձեզ աշխարհ ձեր Հայաստան...։ Հայաստա՛ն. յայդ տեսիլ, յայդ անուն, յայդ յիշատակ, ո՛յր 'ի ձէնջ անթրուանդ կայ սիրտ 'ի ծոցի. եթէ չզգայ ոք տակաւին խլրտիւն յերակունս յանուն ազգի, յանուն հայրենեաց՝ տեսցէ մի գուցէ քար արաստոյ կրիցէ փոխանակ սրտի. թո՛ղ ելցէ՛ մերժեսցի այնպիսին յատենէս, յազգէս, 'ի բնաւ իսկ 'ի մարդկանէ, յանտառս յանապատս 'ի սառամանիս դիցէ զբոյն իւր։ Փոխանակ նորա մատիցեն ինձ այսր ամենայն առաքինի որդիք Հայկայ, որ զազգասիրութեան համաշխարհական առաքինութիւն պատուէն, և ազգասիրութեամբն զմարդկութիւն, մարդկութեամբն զհաստիչն մարդկան. նոքա եկեսցեն այսր՝ որք գիտեն յերկինս զհնոյ հայրենասէր շանթից։

Օ՜ Հայաստան գտեալ, ո՛ սիրելիք, զինչ ոչ պարտիցիք նմա։ Սիրեցք զնա. և այս բաւական է ուսուցանել ձեզ ըզփոխարէնն... Այլ մի՛ ոք ինձ աստանօր 'ի խժդան և յախորժի խոչ ընդ

ամն կալով՝ վայրապար խելս խառնիցէ , և յանուն վառելոյ հայրենասիրութե՛ որպէս վարսամահար բանդագուշեալ հող քան զհող ոգի կլանիցէ և ձորձ ընդ ականջ անդրիցէ՝ որպէս թէ յու-րասս կալով 'ի գայթակղութենէ . և զի՞նչ կամիցի կիսախելք մորոսիկդ . զայն , զի ամենայն ազգաց գուցէն և Հայոց միայն չգուցէ՞ն ազգ և հայրենիք . և զի՞նչ . միթէ ամենայն ազգք ունիցի՞ն սիրտ զգալոյ զգերընականն զայն , զա-մենաբնականն զայն , զհոգեխառն զա-ւիւն ազգասիրութեան , և Հա՞յք միայն զգայազիրկք լինիցին . կամ թէ ամենե-ցուն նոցա իցէ իշխանութիւն ճառել զայնմանէ և բորբոքել զանձինս և զըն-կերս , և Հայո՞ցն եւեթ դատապարտե-ցաւ բերան 'ի լռութիւն : Ո՛հ , թողէք անդր 'ի բաց զվատութեան և զյիմա-րութեան բարբանջմունս . քարասիրտ է որ չզգայ զազգասիրութիւն , անմիտ է որ ազգասիրութիւն կարծէ զգզրդ-մունս , զվտարանջութիւնս , զկարծրա-վզութիւնս և զպատերազմունս . վա-տասիրտ է՝ որ զամենայն եռանդն ազ-գասիրութեան աւելազանց վարկանի : Այլ մեզ զի՞ բնաւ պիտոյ լսել քա-րարտաց և փայտամտաց մարդկան . թողցուք նոցա զինքեանս . և մեք վա-ռեսցուք 'ի հուր ազգասիրութեան 'ի խոհականն և 'ի խաղաղական . ե՜ն ե՜ն և խռովութեանց մեզ պէտք , այլ առ 'ի յուզել զընդարմացեալ ոգիս մեր , պա-տերազմունս պիտոյ է՝ ընդդէմ կաշկան-դիչ մոլար կարծեաց , ապստամբութի՛ 'ի տգիտութենէ և 'ի չարութենէ որ տանին զմեզ 'ի խորխորատս անելս . յա-րուցմունս՝ առ 'ի թօթափել զսերմանս անկրթութեան յոգւոց մերոց , առ 'ի պատել զվէրս եկեղեցւոյ , 'ի զօրացու-ցանել զոգիս մեր լքեալս և կոխեալս :

Ազգասիրութիւն . այո այո պէտք են մեզ ազգասիրութեան , զոր համօրէնս աշխարհ կարդայ և զգենու . իսկ եթէ ոմանք զեղծանիցին այնու և թիւ-րիցեն , պա՞րտ ինչ իցէ վասն այնորիկ ողջախոհացն լռել և դադարել , և ո՞չ մանաւանդ բարձրագոյնս քան զնոսա գոչել , զի ուղղութիւնն հաստատեսցի և մոլորութեանն որոմն հերքեսցի : Ո՛հ , եթէ յերկիւղ խղճի մտաց ապստամբ և յակնածութիւն այսքանոյ սուրբ և վսեմ ատենի , արժան իցէ երբէք բար-ձրացուցանել զձայն և ինձ , որ որքան յաւակնելոյ և անձահ ազգասիրութե՛ ատեցող , նոյնքան և իրաւացւոյն սիրող եմ և պաշտող և քարող , այս իցէ թե-րևս ժամ և տեղի : Այլ իցե՞ն արդեօք որ զայս և զայսպիսիս իմ առեալ ձայնս՝ սոփիստ և գայթակղութիւն արկանի-ցեն . 'ի դատաստան կոչեմ զնոսա ազ-գաց և իրաւանց , կրօնից և երկնից . չեմ խռովիչ , չեմ յահուր յարուցիչ , չեմ հուր մոլեկան . քաջ միտ դիցեն բա-նիցս որոց առողջ են ականջք . այլ զցըր-տութիւն և զանզգայութիւն 'ի վէրս և 'ի պէտս ազգիս՝ յաւիտեան չառնում յանձն . եթէ առաւելազանց ինչ եր-բեք խօսեցայ և վնասեցի հայրենեաց՝ թո՛ղ կապեսցեն արկցեն զիս 'ի ծծմբա-հոտ վիհս Սասեաց , անդ քաւեսցից զա-ռաւել սիրոյն իմոյ մեղանս : Այլ ես սիրեմ և առաւել սիրեմ զՀայաստան հայրենիսն իմ , և զնոյն սէր անխիղճ քարոզեմ ամենեցուն , և ասեմ . Պարտք են ձեզ որդիք Հայկայ ճանաչել զի՞նչ են հայրենիք , և որպիսի՞ ձերդ . և իմ իմիք կարօտ , և դուք որո՞վ ձեռնհասք նմա յօգուտ . սիրել զազգս Հայոց ա-ռաւել քան զայլս յազգաց , որպէս զան-ձըն քան զայլոց անձինս . ճանաչել և պահել անվթար զսեփական շնորհս ազ-գիս , զլեզու նորա , զպատմութիւն նո-րա , զմոլորութիւն և զախորժակս նո-րա անվնասս , զհարազատ դպրութիւն նորա , զատացուածս նորա և զփառս ա-նուան նորա : Օ այսպիսի կամիմ հայ-րենասիրութիւն , և 'ի սմին վառել զա-մենեսին , որպէս զի ստասցուք մեզ սիրտ կանգուն՝ զոր սրբութիւն և հայրենա-սիրութիւն միայն տան մարդոյ , և կան-գուն սրտիւ ընթասցուք 'ի կատարելու-թիւն ազգի և մարդկութեան , և կա-տարեալ մարդկութեամբ ելցուք յաշ-խարհէ : Այս է իմ ճանապարհ և նպա-տակ . և ոչ փառամոլաց և կենցաղասի-

րաց և խռովասէր անձանց մեծամեծ և փքալից տենչանք, այլ և ոչ խծբիծք մնոտիք զոր յաչաղկոտքն կարկատեն 'ի պարսաւքարել զիս :

Իսկ եթէ ուղիղ դատի իմն ազգասիրութիւն՝ հրաւէր կարդամ ամենեցուն իմոց ազգակցաց, քաւ 'ի Թմբրելոց անզգայից, կղկղանօք աշխարհիս զմայլելոց՝ դիւրաթարչամն փառօք և խոշոր հեշտութեամբք, և ամենայն ազնուական մտաց անհատից և անխնդրաց. որք, քստմնիմ յասել, ոչ միայն յայտնիկ անկղիտանան, այլ և բերին 'ի չարն և 'ի վնաս իւրեանց ազգակցաց. այլ ես ազգասիրաց և ճշմարիտ ազգասիրաց ձայն տամ, 'ի բուռն առնուլ յառաջ քան զամենայն զմիշտ քարոզեալն և զմիշտ կարօտեալն զմիութիւն. միութիւն սրտի՝ 'ի ջանս լաւութեան, միութիւն խորհրդոյ՝ 'ի յառաջացումն կենցաղօգուտ գործոց, միութիւն ձեռին 'ի համավաստակ գործառնութիւն, միութիւն հանգամանակի 'ի սատար ազգախնամ գործոց, միութիւն ծանօթութեան 'ի կարևոր գիտութիւնս :

Հաւաքիկ և ձեզ, սիրելիք իմ, որք գնայք և խառնիք արդ 'ի Հայաստան, գիւտ մեծ և կարևոր. ջերմն աւանդ սրտի իմոյ և ատենիս և ամենայն ազգասիրաց, յորում անդուլ վաստակիցէք ձերովսամն. ոչինչ քան զկար ձեր աւելի պահանջեմք, այլ և ոչ պակաս քան ըզնոյն : Այլ գիտեմ զտագնապ մտաց ազգասիրացդ, և մորմոքիմ և խոցիմ ընդ ցաւսդ. խիթայք 'ի հակառակութեանց և 'ի վտանգաց : Այլ դուք մի վերջանայք յառաջարկեալ բարւոյդ և մի վըհատիք. վտանգօք և դժուարութեամբ յաջողին փառաւորնահատակութիւնք. արիութիւն առաջին օրէնք են հայրենասիրութեան. 'ի վատասրտութենէ 'ի բազում չարիս կործանեցաւ ազգս մեր և համապազօր 'ի նոյն տառապի. զամենեսին հաւանեցուցանել և միաբանել՝ ոչ միայն 'ի Հայս այլ և ընդ երկնիւք յանհնարիցն է. իսկ 'ի տես հակառակութեան ոմանց՝ յետս նահանջել այն վատաց գործ է և չփութաց.

առեցէք զչարն, և վառեցարուք 'ի բարին, խնայեցէք 'ի չարահնարոն ցորչափ ներեն գութք. դուք զամենայն գուն գործեցէք. եթէ յաջողիք՝ ահա հասէք որում ըղձայիքն, և եթէ չյաջողէք՝ համայն և այնպէս յաջողեալ էք 'ի հայրենասիրութե՛ : Առաքինացարուք դուք միայն 'ի գործս հայրենասէրս, և մի մընացէ անուն ձեր ծածկեալ յերկրի՝ ցորչափ կայցէ վէմ մի 'ի լերինս Հայոց, և ձեռն մի որ գիտիցէ գրել զանուն եղբօր իւրոյ :

Ոչ ինչ են ինձ պէտք յիշեցուցանելոյ ձեզ զարարս քաջաց նախնեաց և զօտարազնեայց. աւանիկ արձանացեալ կայ առաջի աչաց մերոց և քահանայապետն մեծ, Թարգմանն երկնից և Քրիստոսի երեսփոխեան, որոյ անուն համառօտեաց զոլորտս երկրի առ համբաւ, և շունչ՝ վառեաց զաշխարհ հայրենասիրութեամբ, յեղակարծումն վեհագոյն քան զզրուանեանն արտակիտելով զԻտալիա որպէս նոր զոմն Աթենաս, և մանաւանդ արբելով զհուր հայրենասիրութեան երկնախարոյկ հրով, և մտանանիշ առնելով մեզ զքանչելիսն Աստուծոյ որ ուրեք ուրեք այնու գործեցան. և տարորոշելով յայնմանէ ըզխակագործութիւնս երկրաքարշ մարդկան՝ որք յանուն նորա պատկառելի և յանուն Աստուծոյ երեքսրբենին՝ պատրուակել հնարին զիւրեանց վայրապար, զխաղ և զանբարի հայրենասիրութի՛ս : Այլ մեզ տուեալ են միտք՝ ընտիր առնելոյ ընդ գործս. անիւ շարժէ զմեքենայս և անօթս բազումս. եթէ կապիցես ընդ այն և անօթ չար և զէն վնասու, դու ինքն ես վնասուն պատճառ, և ոչ անիւն որ աղայցէ քեզ զցորեան հացիդ. եթէ առ 'ի կարճել զբընաւ զամենայն գայթակղութիւն զգուշալի էր 'ի գործոց՝ կարծեմ թէ յանապատս միայն կատարէին բազում առաքինութիւնք : Ամենեքին ունին աչս, այլ են և կոյրք, են և բլշակունք, են և քաջատեսք. 'ի քաջատեսացն դատուէ կամիմ ես զազգասէրսն իմ. որպէս զի տեսցեն զի և երկինք պատուեն զազ-

գախրութիւն . քանզի որ եւ մարդոյ իրաւունս պաշտպանութեան անձին եւ ընչից եւ պատուոյ, զխո՛րդ զլանայր եւ զիրաւունս ազգասիրութեան ։

Բայց զի մի ըստ չափ երկարիցեմք յիղձս եւ 'ի բանս, թէպէտեւ 'ի կարեւորս, առ այլ եւս եւ 'ի յետին ձեր փութացուք գիւտ, ո՛ սիրելիք . 'ի գիւտ այնպիսւոյ՝ որում յառաջ քան զամենայն եւ միշտ եւ հանապազ արժան է փափագել ։ Ով է բունագոյն իղձք ազգասիրականք ամբարձցեն զձեզ մինչեւ 'ի կատար Մասեաց, կայ ձեզ աստանօր խնդրելի բարձրագոյն եւ անդրագոյն քան զայն ։ Հայրենիք են եւ այն, այո՛ ազատ եւ հասարակաց հայրենիք, զոր ոչ գետք բաժանեն եւ ոչ սահմանք որոշեն, ոչ լեզուք խորեն եւ ոչ բարք զանազանեն . այլ մի բնութիւն եւ մի օրէնք են այնց հայրենեաց ։ Ամբարձէք զգլուխս ձեր, հայեցարուք ընդ երկինս . ո՛վ ո՛րպէս գեղեցիկք են կամարք 'ի յաւիտենից ձգեալք զմեօք, ո՛րպէս սքանչելիք են ճանապարհք արեգականդ, եւ աստղակաճառ խորհուրդք խաղաղական գիշերաց . սակայն այդ ամենայն զոր տեսանէքդ՝ տակաւին յետնակողմն եւեթ է . 'ի վեր 'ի վեր եւս ամբարձէք զաչս հաւատոյ, եւ տեսջիք զբուն իսկ զսքանչելի զտուն եւ զտաճար պատրաստեալ 'ի սկզբանէ աշխարհի վասն առաքինեաց մարդկան եւ զուարթնոց, յորոց միջի անցեալ բազմի ինքն իսկ ամենաթագաւորն Աստուած, եւ տայ ամենեցուն ճաշակել զիւրն բնութե՛ մարդկութեանս, զօրէնս սիրոյ որ զամենայն շաղկապէ, եւ զիւրն իսկ ամենահրաշ էութիւն ։ Անդ են, անդ, ո՛ սիրելիք, ամենայն վարձք վաստակոց մերոց . անդ քրտունք մեր եւ արտասուք ձեր, անդ ձայն մեր եւ ունկնդրութիւն ձեր, անդ հառաչանք մեր եւ համբերութիւն եօթնամեայ նշդեհութեանդ ձերոյ ։ Ամենայն ինչ խափանի, վատնի, վախճան առնու աստանօր, եւ կիրք եւ ցանկութիւնք մարդկան, եւ մեծութիւն եւ նուաստութիւն, նաեւ գիտութիւնք իսկ, նա եւ հայրենասիրութիւն իսկ, բաց յառաքինականէն . մի ինչ է միայն որ անդրավազեալ անցանէ ընդ ոլորտս երկրի եւ ընդ աւերակս բնութեան . Բարեպաշտութիւն, ո՛ սիրելիք, բարեպաշտութիւն եւեթ . “ Այս է մարդն ամենեւին „ ։

Սա լիցի եւ ձեզ զլուխ ողջալեաց, ընդ որում ոչ փոխանակեսջիք եւ ոչ մի ինչ . այլ, ո՛հ, եւ զհայրենիս անգամ, եթէ հարկ ինչ այնպէս լինէր ապախտ առնել 'ի գիւտ սորա, ես ինքն փութացուցանէի զձեզ զոհել եւ զհայրենիս . ես ինքն համարձակեալ կորզէի եւ տայի ձեզ զջա՛հն եթերականս՝ հուր հարուլ խանձել զՀայաստան եւ ծխով նորին որպէս զհրեշտակն գեդէոփնեան վերանալ 'ի յերկինս ։ Յուշ լիցին ձեզ սիրելիք, յաւիտենական օրէնքն Աստուծոյ՝ զոր խորագոյն քան զմնաւս ուսմանց ջանացան դաստիարակք ձեր տըպաւորել 'ի միտս ձեր . վկայութիւն տամ այսօր ընդ խիղճս ձեր եւ ընդ մեր եւ ընդ ատեանս եւ ընդ երկինս . զի առ այդ հեղաք մեք զյոլովագոյն քրտունս եւ դուք զարտասուս, առ այդ զջերմագոյնս ամբարձաք իղձս, առ այս զդառնագոյն կրեցաք վիշտս եւ մեք եւ դուք . քա՛ւ 'ի ձէնջ այսքան ջանից անփոյթ լինել երբէք . քա՛ւ 'ի ձէնջ, ո՛վ քաղցր աղիք հոգւոց մերոց, մոռանալ ձեզ զհոգիս ձեր թաթաւեալս աստուածային արեամբ, եւ պղծալից մարմնոյ կամաց արբանեկել ։ Բազում անգամ ուսուցաք, պատուիրեցաք, խրատեցաք . արդ 'ի յետին հասեալ պահուս լինելոյ մեր ընդ ձեզ, 'ի ծանրախոս եւ յանմոռանալի պահուս՝ զհետ որոյ ոչ գայ այլ պահ, եւ ոչ եւս ազդի ձեզ ձայն յաթոռոյ աստի, 'ի պահուս՝ յորում եւ ես տրուպս 'ի դաստիարակաց ձերոց լի տագնապաւ համարիմ զյետին զիմ պարտս հատուցանել ձեզ սիրտ 'ի բերան առեալ, 'ի վսեմական պահուս՝ յորում ըստ տիրական կտակին լուծանեմք զձեզ յԱշակերտութեանն խոնարհ անուանէ եւ 'ի հաւասարութիւն Բարեկամութեան վերակոչեմք, յայսմ սոսկալի եւ 'ի հրաժարական պահու՝

յողոք իսկ անկեալ աղերս արկանեմ ձեզ, և նովին տէրունական սարսափելի բանիւք՝ երեսագին շրթամբքս և համբուրգով սրտիս երդմնեցուցանեմ զձեզ. Եթէ սիրէք զմեզ՝ սիրեսջիք զերկինս և զտջիք։ Եհա տամք ձեզ, ո՛վ երկինք, առէք ընկեցէք 'ի կայծակունս յաւիտենական կրակի աստուածային վառարանին զմուրհակ քրտանց վաստակոց մերոց յաշակերտեալ մեզ մանկտիդ. աՀիւնասցի ամենայն. մի՛ ինչ մնասցէ մեզ այսի վարձ, բայց միայն ամբողջս և անապականս պահեցէք ըզհոգիս սոցա մեզ յերկինս. և այս միայն յետին մուրհակ ուխտիցս կացցէ 'ի դիւանս Եստուծոյ։

Եհաւադիկ ձեզ, ո՛ բարեկամք մեր սիրելիք, կնիք յետին և բռնագոյն բանից և ըղձից իմոց, նոյնք և ատենիս այսորիկ, որովք արձակեմք զձեզ արդ յերկրաւոր հայրենիսդ, և ակն ունիմք հանդիպել ձեզ յերկնաւորսն, և անդ լուծանել զկնիքս զայս։ Ելս այս՝ որ թերևս ինձ և բազմաց 'ի մէնջ անընդմէջ յաջորդիցէ յաւիտենականին աւուր՝ առ միւսանգամն զմիմեանս տեսութիւն, օրս այս մի՛ մոռասցի 'ի մէնջ 'ի ապառ։ Ելո՛ն արիք արդ, ելէք, եկա՛յք առնուլ 'ի մէնջ զգրաւական ուխտիցս զոր դնեմք այսօր ընդ ձեզ, զպըտուղս սրտից մերոց քան զոր չունիմք պատուականագոյն ինչ յերկրի ընծայել ձեզ ոեմն. ընկալարուք զաստուածաձիր օրհնութիւն սրբազնեալ Հայրապետիս, և զմիմանջ աղօթիկեր արգոյ Հարանցդ, զարտալիր մաղթանս դաստիարակաց ձերոց, և զՀամբրէն ժողովոյս և զընկերակցացդ զսիրային դրուատս և հրաժարական ձայնս խանդաղակաթս. և յընդունելն ձեր զսոսին ցուցէք զձեզ արժանիս սիրոյն գոլոյ՝ որով յուղարկեմքս զձեզ աստի, և արժանիս յուսոյն՝ որով մնան ձեզ անդ հայրենիք, և երկինք 'ի վերոյ։ Եայս երթայք և դուք սիրով և յուսով. մի՛ մեղիցեն ձեզ խռովութիւնք ազգաց և մի՛ բռնութիւնք տարերաց. օրհնեալ լիջիք դուք յերկնից և յերկրէ. կարկառեսցի ձեզ 'ի բարձանց հաշտարար նիզակ երկնախորանն Հայկայ՝ պուղելով զմթերս մրրկաց. յօշատեսցեն ձեզ բազուկք Եահագնի զնըհանգս և զընդդայս դարմանակալս ծովուց. ընչեսցեն ձեզ խաղաղութիւն օդոց սուրբք հայրենիք, և մանաւանդ հեզաձեմն կուսանակ Եստղն ծովուց առաջնորդեսցէ ձեզ անվտանգ. և աջ անմահ Եքարչին հովանասցի ձեզ 'ի դագաթանց անհասանելի աթոռոցն մինչև յաւիտեանս։

*Եյլդու ինձ ո՛վ միշտ զարմանալեաց հրաշակառոյց, և անծանօթից 'ի մահացուաց դէ՛ռ շաւղաց, անմա՛հդ նախախնամութիւն. որ հզօրագունին լոկոյ անդիմադարձ որ 'ի մեզն ըղձաւէտ կրից՝ ողջամբ հասուցեր զաւանդք սրբոյ առ անձկացեալսն իւրեանց ծոցս, զայլովքն ապահոտ արարեալ զիմովք կամամնածական հնարագիտութիւնք. որով փանաքիմացս՝ ամենիմաստնոյդ յանդիման իմն առնէի դէմն և դիտմունս Ճանապարհաց գնացից. և կրշտամբեալ քո զիս մարդասիրապէս կամեցեալ ընդ Եդումէական նահապետին, եթէ ոչ է և թուչնոց մտաց զքոյին Ճանաչել Ճանապարհ և ոչ աչաց անգեղաց զքեզ հետազօտել, զդար 'ի դար ծաՃանմունս թուլատարը դաշտին 'ի կուռ փոխանակեցեր ցամաքագնաց պողոտայ, և զսօսաւիւնս ամայութեանց տամուկ անապատին՝ 'ի շառաչիւնս շինանիստ երդումարդաց, և Եպիտակափառն փոխան ծիծաղախիտ ծովուն՝ ընդ Եաքսինեայ մրրայօն կոհակս սահարկեալ խաղացուցեր՝ համայն 'ի նոյն ժամանեցուցանելով 'ի կէտ նախանկատ. և զկենցաղոյս այսպէս զբազմայեղյեղ ալիքս ծից և զվշտաշատն տառապանաց առաջնաՃաշակս ընծայեցեր համբակացն. արդեօք զի և փորձագոյնս ընդ քրայս վշտացն յաւելուածոյ՝ հատուցես զնոսա քեզն նուիրողաց, ընկալ ուրեմն քեզ 'ի հաՃութեան ձօնի և զայս ամօրեայ տաղտապկոտ յոյզք սրտիցս թալացելոց

ընդ տարուբերեալ օդամունս երկայ֊նայածուկ ճանապարհին՝ ընդ որ մին դիմէր 'ի հայրենիս և միւս յղարկէր , երկաքանչիւր հաւասարք յանձկութե ։ Աղէ և ընդ դժնդակագոյնն քան զնո֊սին , ո՛հ ո՛հ , ընդ բազմավտանգ օձաձև կենցաղոյս բաւիղս , դու ինքն „ այսու֊հետև անցուցեալ զնոսա աղաչեմ, 'ի միակն յայն հուսկ ապա յարահեան 'ի քո կառուցես երկնաչու պճղոսայ , որ միայն գիտէ հանել 'ի հանգիստ զհո֊գիս հիւծեալս 'ի դարձադարձ զեղեր֊մանց հովտիս լալոնից ' ։

Հ․ Ղ․ Մ

Առն Կէղէճեան Յարութեան ։

ԱՀԱ մեկնիմք , ահա կորզիմք 'ի հայրենի ձեր գրկաց , և երբ խօսես֊ցուք եթէ այլ ևս աղխեալ կացցեն բե֊րանք ․ ահա հասին մեր յետին ժամք ․ փոքր միւս ևս և այլ չկայ մեզ վայելել 'ի տեսութիւն ձեր , և դեռ զայեալ ար֊գելցին սիրտք 'ի յանձուկ ծոցի ․ օն ժամ է տեղի տալ անզուսպ կրից սրտի , զի խիստ է սրտի ընկլուզելոյ յանդուն֊դըս բարեաց ժուժալ լռել 'ի սպառ ։ Թէպէտ աղկաղկ չըթունք զի՞նչ զօրես֊ցեն թարգման կալ ներքին մարդոյն , սակայն լաւ է թոթովել ինչ քան լռեա֊կալ ամենևին ։

Շատ իսկ լցուցին զմեզ , ով Հարք , առ 'ի ձէնջ զեղեալ տարափք երախ֊տեաց ․ շատ իսկ 'ի հայրախնամ սրտից բղխեցին մեզ սահմանք հայրագորով սի֊րոյ ։ Ոչ է ոչ գտաք երկիր հիւթեղ բեղ֊մնաւոր՝ փոխարինել հարիւրապատիկ տոհմականօք զառ 'ի ձէնջ մեզ շը֊ռայլեալ զանխնայ վաստակս և քրտունս , սակայն կրեմք անշուշտ սիրտ հայրա֊սէր որդեկաց , որ ոչ ապախտ առնեն և զդոյզն ինչ նիշ հայրագութ ձեր սիրոյ ։

'Ներեցէք անժոյժ զարմանացս , ով Հարք որդեսէրք ․ զի՞նչ զձեզ շարժէ յայսչափ սէր և գութ առ օտարս որդիացեալս ձեզ ․ զի ոչ նպաստէ ձեզ յայս ընա֊ծին գորով աղեաց ծնողի ․ զի՞նչ այլ քան թէ վսեմ առաքինութիւն անձնեղ կեր֊պարանեալ 'ի ձեզ , և խղձք ազգասէրք որով , ո՛վ հարք հայրենեաց , իբրև տա֊նուտեարք մեծի ընտանեաց , ոչ այլ ինչ հոգայք և երկնէք բայց միայն զօգուտ ազգիս ։ Երանի մեզ , որ միայն արժանի գտաք 'ի միջոյ հաւորէն ազգիս՝ տեսու֊թեան հասարակաց հարցդ մերոց , և 'ի մօտոյ զգուեալ 'ի ձէնջ մարթիմք դոյզն բանիւ մատուցանել ձեզ զերախ֊տապարտ շնորհակալիս մեր ։ Այս շատ է մեզ՝ երանելի զանձինս վարկանել զա֊մենայն աւուրս մեր , և որոց 'ի հե֊ռաստանէ 'ի համբաւոյ ծանուցեալ ըզ֊ձեզ գովութիւն հարկանիցեն ձեզ , պանծալ բարձրագլուխ թէ մեք առ ոտս նոցա մնաք և յար 'ի տեսութիւն նոցա վայելեցաք ։

Այլ քեզ մանաւանդ , ով Հայր հարց մերոց , քեզ առաւել քան այլ ումեք սիրտք մեր սիրայեղցք շնորհապարտ ճանաչեն զանձինս , որ կորզեալ զմեզ 'ի հայրենի գրկաց , մանաւանդ թէ յայլ փոխադրեալ ծոց հայրենի հասուցեր զմեզ յայս երանութիւն , և շնորհ ու֊նիմք գեղեցիկ բաղդին որ դարձեալ հայր կարգեաց մեզ զքեզ , և արդ ար֊ժանի գտանիմք ընդունել 'ի քէն զյե֊տին օրհնութիւնդ ։ Ի քեզ երբեմն զը֊տեալ հայր որդեսէր՝ սփոփեցաք ընդ բաժանիլն 'ի ծնողաց ․ արդ ո՞ մեզ մխի֊թար ընդ անջատումն 'ի նմին քաղցր հօրէ հարց մերոց ։

1 Ատաղանչիս այս բան ակնարկէ 'ի դէպս ու֊ղևորութեան մանկտւոյն 'ի Թրիեստ քաղաքէ 'ի Վիեննա ընդ ցամաք , և անտի ապա դանուբեան շոգենաւուք ընդ Եւքսինեանն Պոնտոս 'ի Բիւ֊զանդիոն , ուր և ժամանեցին ողջամբ 'ի 16 Յու֊նիսի ։